թէպէտ եւ բազմիցս յորդոր եղեն նմա միաբանք յանձն առնուլ՝ այլ չեղեւ հնար, զի նա պատճառէր զտկարութիւն անձին իւրոյ։ Սակս ազգ սարերին միաբանք զմիտս Թէոդորոսի և խնդրեցին չպնդել առ այժմ զընտրութիւն Պատրիարքի· զի 'ի դառն եւ յանբարի ժամանակիս դըժուարին էր ատիպել և կամ յորդորել զոք յայն պաշտօն. և յայն սակս բարի վարկան կատարել զԱթոռն ժամանակս ինչ առանց Պատրիարքի· զի երկիրն Պաղեստինոյ տակաւին կայր 'ի ծփանս յերեսաց մրրկաբար խռովութեանց։ Գրեաց նաեւ ինքն Թէոդորոս զպատճառս հրաժարման իւրոյ· զի ըստ միոջէն ընթեռնուլ, ասէր, 'ի հանրագրութիւնս միաբանաց և մի լինել մեղադիր։ Զի միաբանք կային վարանեալ և տարակուսեալ յերեսաց պարտուց և նեղութեանց։ Սմին իրի առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս զՊետրոս և զկարապետ եպիսկոպոսունս եւ զԱտենփաննոս վարդապետն՝ բանիւ բերանոյ պատմել զթշուառութիւն միաբանաց՝ և հնարս գտանել ազատութեան· զի ինքեանք յորդորանօք եւ սիրով կապեալ ընդ միմեանս, սպասէին այցելութեան Տեառն և ազգին, եւ 'ի վերջոյ ասէին· զի եթէ ձեռնտու լեալ երեւելիք ազգին ազատեսցեն զՍ. Աթոռն 'ի պարտուց, խոստանամք մնալ 'ի վանս· իսկ եթէ ոչ՝ ցրուիլ երթալ իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրոյ։

Եւ զկնի մեկնելոյ նոցա յԵրուսաղէմ, կացուցին փոխանորդ զՀիրահոս վարդապետ 'ի տեղի Պետրոսի։ Եւ 'ի սոյն աւուրս ՄԷՀԷՄԷԼ Փաշա էառ 'ի Հայոց 40 քսակս արծաթոյ, նոյնպէս և 'ի Ցունաց, որոյ վասն դարձեալ փութացուցին գիր զկնի նոցա (1800)։

Նախ քան զմեկնիլ մեծի Վէզիրին 'ի կոստանդնուպոլիս, խնդրեաց 'ի Հայոց 'ի ձեռն սեղանաւորի իւրոյ Անտոն Աղայի իր օգնութիւն կամ փոխ 100,000 դահեկան· զի որպէս օգնեցին առ, յառաջագոյն ազգութեան, օգնեսցեն այժմ և ինձ։ Անտոն Աղա ծանոյց նմա զաղքատութիւն վանաց, և առաջին պարտքն տակաւին անվճար· բարկացեալ ընդ այս եպարքոսն ասէ· գիտեմ զբարս ձեր, զի քազգրութեամբ չկատարէք զիրս ինչ· կոչեցից առ զտեսուչ վանաց Ցոպսէփ, և 'ի նախատինս իմ զնա յատեանի, տեսանես թէ որպէս փութով կատարէ զնդիրն։